# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*20.09.2022թ.*

## ՈՐՈՇՈՒՄ 732-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 25.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 0.00259 ՀԵԿՏԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐՏԻՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասինե թիվ 225-Ն օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 4-ի №01//05499-2022 գրությունը, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Մարտին Բաղդասարյանի 2021 թվականի հունվարի 22-ի դիմումը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի թիվ 6/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում, Մարտին Բաղդասարյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 25.9քմ արտաքին (22.7քմ ներքին) մակերեսով ավտոտնակը (կադ. ծածկագիր՝ 09-003-0113-0011, վկ.՝03032021-09-0006) (25.9x1100=28500) քսանութ հազար հինգ հարյուր ՀՀ դրամով և 0.00259հա մակերեսով սպասարկման հողատարածքը (25.9x810=21000) քսանմեկ հազար ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Մարտին Բաղդասարյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022/20/09
Ք.Գորիս